

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ-ԲՆ-ԴԾ-18/05**

ք. Երևան

« 12 » « փետրվարի » 2018թ.

Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը, - ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար **Հ.Հովհաննիսյանի** (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է Պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Արգելոցապարկային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրենի ժ/պ **Լ.Գաբրիելյանի** (այսուհետ՝ կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող **ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումներ»** ծրագրի՝ բաժին 05, խումբ 04, դաս 01, ծրագիր 05 (բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում, այսուհետ՝ Ծրագիր), իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

- 1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Որոշմամբ նախատեսված՝ մինչև **140 288 000 (հարյուր քսուսուս միլիոն երկու հարյուր ութսունութ հազար)** ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:
- 1.2. Ծրագրով նախատեսված Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները (այսուհետ՝ միջոցառումներ) ներկայացված են սույն պայմանագրի Հավելված N*1-ում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

- 2.1. **Պետական մարմինն իրավունք ունի՝**
 - 2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.
 - 2.1.2. Որոշմամբ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը.
 - 2.1.3. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝
 - ա) Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու.
 - բ) Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),
 - գ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին.
 - 2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:
- 2.2. **Կազմակերպությունն իրավունք ունի՝**
 - 2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը Պետական մարմնի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը.
 - 2.2.2. Պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:
- 2.3. **Պետական մարմինը պարտավոր է՝**
 - 2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.
 - 2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորիգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.
 - 2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ.
 - 2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 5 օրացուցային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, Պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եւօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը:
- 2.4. **Կազմակերպությունը պարտավոր է՝**
 - 2.4.1. իրականացնել ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվառումը՝ հաշվապահական հաշվառման վարման Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան.



- 2.4.2. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով.
- 2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.
- 2.4.4. Պետական մարմնին ներկայացնել միջոցառումների իրականացման մասին աճողական հաշվետվություններ հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա մինչև 5-ը, իսկ 4-րդ եռամսյակինը՝ մինչև դեկտեմբերի 15-ը, իսկ ծրագրի ավարտից հետո՝ 20-օրյա ժամկետում ամփոփ հաշվետվություն.
- 2.4.5. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.
- 2.4.6. Պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ Պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները.
- 2.4.7. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.
- 2.4.8. սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողություններն ուղղել իր կանոնադրական գործառույթների իրականացմանը՝ նախապես համաձայնեցնելով Պետական մարմնի հետ:

3. Մոնիթորինգը

- 3.1. Պետական մարմինը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
- 3.2. Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
- 3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
- 3.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
- 3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

- 4.1. Սույն պայմանագրի Հավելված N2-ով հաստատված, տվյալ եռամսյակին բաժին ընկնող գումարը յուրաքանչյուր ամսվա առաջին 5 աշխատանքային օրվա ընթացքում, հավասար մասնաբաժիններով Պետական մարմինը փոխանցում է Կազմակերպության բանկային հաշվին՝ որպես տվյալ եռամսյակի կանխավճար:
- 4.2. Եթե Կազմակերպությունը տվյալ եռամսյակի համար նախատեսված միջոցառումները
 - ա) իրականացրել է ամբողջությամբ և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - բ) ամբողջությամբ չի իրականացրել, ապա կիրառվում է սույն պայմանագրի 2.1.2 և (կամ) 2.4.6 կետերով սահմանված պայմանները և իրականացված միջոցառումների արժեքի չափով Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, իսկ հաջորդ կանխավճարը վճարվում է չիրականացված միջոցառման չափով պակաս և սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով.
 - գ) իրականացրել է նախատեսվածից ավելի և Պետական մարմնի կողմից իրականացված միջոցառումների մասին հաշվետվությունն ընդունվել է, ապա Կազմակերպությանը փոխանցված կանխավճարը մարվում է՝ համարվելով որպես պատշաճ իրականացված ծրագրի համար հատկացում, և վճարվում է հաջորդ կանխավճարը՝ սույն պայմանագրի 4.1 կետով սահմանված կարգով, իսկ ավել իրականացված միջոցառման չափով վճարումն իրականացվում է մինչև 2018 թվականի դեկտեմբերի 20-ը, սակայն ոչ ավելի սույն պայմանագրի 1.1 կետով սահմանված գումարից:

5. Կողմերի պատասխանատվությունը

- 5.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է ստացված ֆինանսական աջակցության գումարները չիրականացված միջոցառման չափով վերադարձնել Պետական մարմնին և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

- 6.1. Սույն պայմանագրի պայմանները տարածվում են 2018 թվականի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:



7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

- 7.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու սույն պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

- 8.1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագիրը (Հավելված N°2) հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.2. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.3. Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում գոյացած խնայողությունները Կազմակերպությունը ուղղում է իր կանոնադրական գործառույթների իրականացմանը:
- 8.4. Սույն պայմանագիրը կազմված է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ: Սույն պայմանագրի Հավելվածներ N°N1-ը և 2-ը համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:
- 8.5. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011007805
ՀՎՀՀ 02507198

ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար

Հ.Հովհաննիսյան


(ստորագրություն)




ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ
Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ
«Ակբա-Կրեդիտ-Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ
ՀՀ 220465140089000
ՀՎՀՀ 00804807

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի
տնօնեն ժ/պ





ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ
Բնակարկային կառուցողականության նախարարության
Սոցիալատեղակայման ղեկավար
Հովհաննիսյան

(Handwritten signature)
ՍԻԶՈՅԱՌՈՒՆ


ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
«Արզելոցապարկային» ՊՈԱԿ-ի



NN Ը/Կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	Նկարագրություն	համառոտ բովանդակությունը	կատարման ժամկետի գործառնականացվելիք	տեղակայվող պիլոտային շրջանի անվանումը	վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	Արզելոցապարկային համայնքի պահպանություն/պաշտպանություն	«ԱՊՀ» ՊՈԱԿ-ի տնօրինության ներքո գտնվող տարածքների պահպանություն (23448.7 հա)*	Պահպանության և պաշտպանության համար իրականացվող միջոցառումներ	Պահպանության և պաշտպանության համար իրականացվող պիլոտային շրջանի անվանումը	31.12.2018թ.	121410 500
2.	Հակահողեհային միջոցառումներ	1. Հակահողեհային ճանապարհների ինժեներական 2 կմ ընդհանուր երկարությամբ. 2. Հանքանալների շերտերի կառուցում 1 կմ ընդհանուր երկարությամբ (2 հա)	Հողի վերին շերտի հանքային մնացորդների հեռացում և առուների պատրաստում և մաքրում, հողի վար	Հարակից տարածքներից հողերի ներառման կանխում	30.09.2018թ.	706 000
3.	Արզելոցապարկային համայնքի տնօրինության ներքո անտառատարածքների հերթական վերստուգիչ ստուգումների անցկացում և արդյունքների ամփոփում (գարնային - 2-րդ եռամսյակ, աշնանային - 3-4-րդ եռամսյակներ)	Անտառային տարածքների հերթական վերստուգիչ գարնանային և աշնանային ստուգումներ ու ամփոփում	Ստուգումների և արդյունքների ամփոփման միջոցառումներ	Բացթողման թերությունների բացահայտում և վերացում	31.12.2018թ.	1000 000
4.	«Լրջուրի» պետական արգելափակում և հարակից տարածքներում տարածված հազվագյուտ, անխնայ և ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների գիտական ուսումնասիրությունների և մոնիտորինգի իրականացում	Գիտական ուսումնասիրությունների և մոնիտորինգի իրականացում	Դասական մեթոդներով դաշտային ուսումնասիրություններ արդյունքի և հարակից տարածքներում	Տնօրինման և պահպանման նպատակով պահպանման և դրանց հետազոտման հայտարարում, գիտական ուսումնասիրությունների հաշվետվությունների ակտիվացում	31.12.2018թ.	980 000
5.	Դեղորայքակրողների և «Ջրվեժ» անտառապարկում բնակվող և ներմուծված ճառագիտակցության միջոցառումներ, Ֆաունայի և ֆլորայի հետազոտում, տեսակային կազմի տեղական և ներմուծված ճառագիտակցության համալրման միջոցառումներ	Տեսակային կազմի ամբողջական ցուցակների ստեղծում և լրացում	Դաշտային ուսումնասիրություններ և նոր տեսակների ներմուծում	Լրամշակված ցուցակներ, ներմուծված նոր տեսակներ	31.12.2018թ.	3700 000

6.	«Որդան կարմիր» պետական արգելափակումի ֆլորայի ուսումնասիրություն և Որդան կարմիր միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Ֆլորայի ուսումնասիրություն և Որդան կարմիր միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Դասական մեթոդներով դաշտային ուսումնասիրություններ արգելափակումի տարածքում, միջատի հաշվառում ու մոնիտորինգ	Լրամշակված ցուցակներ, Որդան կարմիր միջատի թարմացված մոնիտորինգային տվյալներ	31.12.2018թ.	980 000
7.	«Ռեմոնտի ցրաբանտան» և «Հանքային ցրաբանտան» պետական արգելափակումի ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների իրականացում	Ֆլորայի և ֆաունայի ուսումնասիրությունների իրականացում	Դասական մեթոդներով բուսական և կենդանական աշխարհի դաշտային ուսումնասիրություններ	Գույքագրված ցուցակներ	31.12.2018թ.	800 000
8.	Անտառապարկային միջոցառումներ	Անտառապարկում ինժեներական միջոցառումներ	Շատերի եր. ձևավորում, ոռոգում, բաժանների և առուների մաքրում	Խնամված անտառապարկ	31.12.2018թ.	2986 000
9.	Անտառապարկային միջոցառումներ	Տարբեր լիվության տարածքների ծառայակառուցում	Շատառումով	Բարձր լիվության անտառապարկներ	31.12.2018թ.	1368 000
10.	Տեսակային ցուցակում և ինժեներական «Ջրվեժ» անտառապարկում տեսակային տարածքում տնկելու և պահպանելու նպատակով	Տեսակային արտադրության կազմակերպում	Տեսակային ընտելում և ինժեներական	Սնկային ուժերով անցկացված տնկելու	31.12.2018թ.	220 000
11.	Ոռոգման միջոցառումներ	1. Ոռոգման ջրի ձեռքբերում.	1. Ոռոգման ջրի ապահովում.	Գործող խողովակաշարով ոռոգման ջրի ապահովում	30.09.2018թ.	6137 500
ԸՆԴԱՄԵՆԸ						140 288 000

* առանց պահպանության համար ֆինանսական միջոցների հատկացման



Մրցարային դասիչը		Անվանումը «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրինության նքրը գտնվող ԲՀՊ տարածքների պահպանության, գիտական ժողովրդագրությունների, անտառտնտեսական միջոցառումներ	Ոչ ֆինանսական ցուցանիշներ				Ֆինանսական ցուցանիշներ				
1155	1Մ 06	Լկարագրություն Բնության հատուկ պահպանվող տարածքներում, ազգային պարկերում, պետական արգելոցներում պահպանության, գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական միջոցառումների իրականացում									
Չափորոշիչներ			1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի	1 եռամսյակ	1 կիսամյակ	9 ամիս	Տարի	
Քանակական			ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում գտնվող քանակական էկոհամակարգերի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության պահպանություն (պաշտպանություն), հա մարդու գործունեության հետևանքով ՊՈԱԿ-ի տնօրինության ԲՀՊ տարածքներում գտնվող քանակական էկոհամակարգերի հավասարակշռությունը խախտող գործընթացների կանխարգելման ապահովում, հա	23448.7	23448.7	23448.7	23448.7				
				1	1	2					
			1	2	3	4					
Որակական			Մշակված չէ								

6

Ժամկետայնություն	Հերթական վերատուգիչ արտոգումների անցկացում և արդյունքների ամփոփում				Գարնանա- յին II եռամսյակ, աշնանա- յին III IV եռամսյակ				
Իրականացվող միջոցառման վրա կատարվող ծախսը (իսպառ դրամ)		X	X	X	X	25251.8	57518.0	95395.8	140288.0
Մրցագիրը (նրազանգը), որի լուրջագրումն իրականացնում է քաղաքականության միջոցառումը									
1155 Բնական պաշարների կառավարման և պահպանման, բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման միջոցառումներ									
Վերջնական արդյունքի նկարագրությունը									
Բույսերի և կենդանիների պահպանություն և վերարտադրության աճի ապահովում									
Միջոցառման իրականացնողի անվանումը									
«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ									